



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ԺԲ. — ՇՐՋԱՆ ԺԴ.

1881

ՏԱՐԻ ԺԴ. ԴԵԿՏԵՄ. 31.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ս. ՄԻԼԸՆԻ ՕՐՀՆՈՒԹՐԻՆ

Վեհափառ եւ Սրբազնագոյն Հայրապետն ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. Կաթողիկոս ի պէտս Եկեղեցեաց Հայոց կամի Աստուծով Ս. Միլլոնի օրհնութիւն կատարել ի 16ն Մայիսի յառաջակայ 1882 թուականի ի Մայր Աթոռոյն ի Ս. Էջմիածին, որոյ վասն փութամբ ծանուցանել համայն Հայկազուն ժողովրդոց՝ հրաւիրելով զնոսա ի նոյն բաղձալի եւ հոգեւոր մեծ հանդէս:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծապանծ եւ փառաւոր խորհրդաւոր արարողութեանց մին եւ գլխաւորն է Ս. Միւռօնի օրհնութեան շնորհաբաշխ հանդէս, ուստի անշնչտ եմք՝ զի սիրելի Ազգայինք մեր յամենայն կողմանց աշխարհի հոգեւանդն անձկանօք պիտի դիմեն արժանանալ նոյն վսեմ հանդիսին տեսութեան եւ շնորհաց մասնակցութեան, միանգամայն նաեւ բազմադարեան շքեղափառ վկայից եւ պարծանաց Եկեղեցւոյ մերոյ Ս. Վայրացս եւ անգին եւ սրբազան հնութեանց ուխտի եւ այցելութեան պարտքը հատուցանելով՝ մխիթարիլի հրճուանօք ըստ հոգւոյ:

